**Արձանագրություն N 2**
**«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/47» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

27 սեպտեմբերի 2022թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ ՝ Լ.Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ե.Խաչատրյան

Լ.Հարությունյան

Քարտուղար՝

Դ. Միերյան

1. **«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/47»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2022թ. սեպտեմբերի 27-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է սեպտեմբերի 28-ին, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուց հետո՝ հաջորդող աշխատանքային օրը՝ 2022թ. սեպտեմբերի 29-ին, ժամը 11:00, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/47» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

29 սեպտեմբեր 2022թ.
ժամը՝ 11:00

6. **«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/47»** ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2022թ. սեպտեմբերի 28-ին, ժամը 10:00:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | Քլասթեր ՍՊԸ | ք. Երևան, Արաբկիր, Հ.Քոչար 17-30 հեռ. +374 098 000-693 |
| 2 | Ջանիկ Սևոյան | ք.Արարատ, գ.Շահումյան, Գայի 8 հեռ.+ 37455800052 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | քանակը | Գնման առարկայի նախահաշվային գինը | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քլասթեր ՍՊԸ | | Ջանիկ Սևոյան | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| | | | | | | | | |
| 1 | գովազդային ծառայություններ | դրամ | 1 | 2 300 000 | 2 266 902 | - | 4 000 000 | - |

- **Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն <<առանց ԱԱՀ>> սյունակը**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է հանդիսանում. «Քլասթեր» ՍՊԸ-ն:

10. Հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումը իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/47» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

07 հոկտեմբերի 2022թ.
Ժամը՝ 11:00

11. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

12. Հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 03.10.2022թ. N03/26-1/17019-2022 գրությամբ տեղեկացվել է, որ 28/09/2022թ ժամը 09:31-ից մինչև ժամը 09:39-ն և ժամը 10:04-ից մինչև ժամը 10:23-ն էլեկտրոնային աճուրդների համակարգը եղել է անհասանելի, ինչի արդյունքում խոչընդոտվել է վերոգրյալ ժամանակահատվածներում անցկացվելիք աճուրդների բնականոն ընթացքը և ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հայտարարված ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/47 ծածկագրով գնման ընթացակարգը դրանց թվում է:

13. Հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի վերը նշված գրությամբ պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

14. Հիմք ընդունելով վերը նշվածը, հանձնաժողովը որոշեց ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/47 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Գնահատող հանձնաժողովի նախագահ ՝ ---------------------- Լ.Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ ---------------------- Ե.Խաչատրյան

---------------------- Լ.Հարությունյան

Քարտուղար՝ ---------------------- Դ. Միերյան